

ՏԵՐ ԵՒ ՏԵՕՐԷՆ

Ս. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՍՅԷ

H. TOROSSIAN

Direct. - propr. du journal Arménien

ARCHAÏOУCE

LE CAIRE (EGYPTE)

—*—

Չի հրատարակուած ձեռագիրները

ևս չեն տրուիր :

ԱՐՄԵՆՆԱՅՄ

Կ Ի Ս Ս Ը Ա Բ Ա Թ Ա Թ Ե Բ Թ

ԱԶԳԱՑԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՊԱՅՄԱՆՔ

ԵՆԻՊՑԱՍ

Տարեկան դրո . ողջ 60
Վեցամսայ ,, 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան ժրանգ 20
Վեցամսայ ,, 12

Բաժանորդագիրը կանխիկ է՝ եւ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ : Բարեգործական Ընկերութեանը համար 50 առ հարիւր գեղջ կ'ըլլայ :

ՇԱԲԱԹ ԹԻՒ 443

ԱՐՇԱՆՈՅՈՒ ԶԵՆՔԷ ԶԻ ԾԱՌՈՒԻՐ

ՏԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ

«Արշալոյս» ի խմբագրատունը ամսոյս 1էն սկսեալ փոխադրուած է Մանսուր Բայա խալիճ Մուհարրէմ պէյի դեղարանին քով, հետեւաբար ո՛ր է գործի համար պէտք ունեցողները կրնան ըստ առաջնութեան հոն դիմել :

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

Ժնչ եղանակաւ պէտք է շարժիլ կը հարցնէինք մենք մեզի՛ն՝ անցեալ թուով, որուն ինքրոյն ընտրութիւններուն վրայ կամայ կամայ հայեացք մը նետել ուղեւ խօստուած ստորագրելով :

Նախորդով տրուած խօստուած մը յարգելու համար է ուրեմն այս քանի մը տողերն ալ . վստահ եղէ՛ք որ՝ եթէ հին կամ նոր երեսփոխաններէն մէկուն կամ միւսին գումար մը պարտք ունենայի, զայն հատուցանելու համար այս աստիճան խոստանալու և փութկոտ չ'պիտի գտնուէի : Հայոց մէջ թուղթով ու գրելով զբարոյներուն համար յատկապէս զարձած անձնակազմ յատկութիւններէն մին՝ բայց գլխաւորը չէ՛ այս . ինչ կըսէք :

Բայց ինչ որ է, քանի որ խօստուածներէս գոնէ այս մասին մէջ չ'ստիպեցանք ճշգրտապէս ըլլալ կապացուցանել թէ՛ միւսնոյն կարող եմ ըլլալ ուրիշ խօստուածներու մէջ ալ, ան առեւն հարկ կըլլայ վերոյիշեալին պատճառները փնտաւել և անտարակոյս ս'ա եղբակացութեան պիտի յանգի խուզարկուն թէ՛ այդ վերոգրեալ անխորտուածանց պատճառը ուղղակի ինքը հայութիւնն է . որովհետեւ դեռ այդ ազգին մէջ շատեր կան՝ որ չ'են գիտեր թէ՛ արժանապատուութեան զգացումին թելերը յաճախ կեանքի պայմաններէն ո՞ր մէկուն վրայ աւելի թրթրուուն և յուզելի ձայներ նշեցըլու են . . . :

Ան այժմ մէկդի թողունք այս պարտութեանը, որովհետեւ եթէ շատ յառաջանալ ուղեւք այս ուսումնասիրութեան մէջ, լայնարձակ էլեր գրաւելու պէտքը պիտի ունենանք

և վերջապէս ոտքերնիս ալ դրաւիկն պիտի բաղխի ապերախութեանը, հակառակ կողմէն կարգաւով . ու դառնանք մենք ընտրութիւններուն՝ որուն վրայ բաներ մը ըսել խօստացած էինք ինչպէս վերը բացատրեցինք :

Ժողովուրդին առաջնորդելու իրաւունքը՝ քուէներու զօրութեամբ այս կամ այն անձին ձեռքը տալը եզրագոտի մէջ յաճախ պատշաճաւոր սահմաններու մէջ տեղի չ'ունենար : Պարզ ժողովուրդը՝ որ ստէպ շատ նուազ նախանձախնդիր է ազգային շրջանակին մէջ տեղի ունեցած անցու-գարձնու ստուգութեանը տեղեկանալու, և շատ անգամ տրամադիր է խարուելու, երբ իրեն ոեէ կողմէ մը ըսուի թէ՛ լրագրողներն ալ անձնակազմ խընդիներով կ'ըլլալին, հետեւաբար իր քուէն պիտի տայ այլևայլներէ առաջարկուած անձին, — եթէ ասոնք՝ Լատարանի պէս գոյութիւն ունենալու իրաւունքէն բացարձակապէս զրկուած ալ ըլլան . . . :

Երտակ չէ՛ այս . Լատարան՝ որ իր խեղկատակ վարիչներուն տգիտութեանը պատճառաւ մինչև ցարդ ինկած, և ցեխերուն մէջ թաթխուած ամենուպարզ խաւնոք մը դարձած է, անոր չ'են կրնար վստահիլ հեղինակաւորութիւն մը՝ մարդերը դատելու, հոգեբանութիւնները ուսումնասիրելու, շարք բարեխն դասաւորելու, որովհետեւ դեռ այդ ոգործելիները իրենց գործած շարքներուն գիտակցութեանը ունենալու տարիքին մէջ անգամ չ'են . և չ'հակասելու համար ըսենք թէ՛ բայց Սեդրաք Օտապաչեանէն, որ քառասուն հատ ամուլ ու անօգուտ տարիներ ըլլորած է, մեծագոյն մասը Սուտանի պէրպէրիներուն հետ ապրելով, մնացեալներէն երեքը միացած՝ հազիւ 25 տարեկանի մը խելքը ունին . հայալ ինչ ընելու է, եթէ ասոնց որոշումով պատրաստուած ցուցակը, անձերը չ'հասկնաք, ցախաւելով մը դուրս վանել տանք ընտրական գործողութեանց թղթերուն մէջէն :

Շատ պարզ է մեր ընելիքը : Ազգային Սահմանադրութեան տեսերակ մը՝ որ գոնէ եզրագոտի համար ամէն հայու ալ դիւրամատ-

չելի եղած է, առջևնիս կ'առնենք և անոր 68րդ, յօդուածը կը կարդանք, որ հետեւեալն է :

«Երեսփոխան ժողովոյ համար, ընտրելի են ազգին այն ամեն անհատները, որոնք երեսուն տարին լրացուցած ըլլալով, օսմանեան հրատարակ, տէրութեան օրինացը տեղեկի, և ազգային գործոց հմուտ են և ընտրութեան իրաւունքէն ըստ 67րդ . յօդուածոյ զրկուած չ'են :»

Թէ՛ ինչ է 67րդ . յօդուածը, այն ալ կարգանք :

Յօդ. 67 . — Ընտրելու իրաւունքէն դատարանապետ զրկեալ են հետեւեալ չորս դաս անձինքը :

Ա . Քրեական յանցանք դատապարտեալները, որոնք ըստ պատժական օրինաց տէրութեան՝ քաղաքականապէս մեռեալ կը համարուին : Բ . Ազգային գործոց մատակարարութեանը մէջ նենդութեամբ բռնուած, և ազգային ժողովներէն մէկուն կողմէն դատապարտուած անձինք, որոնց համար ազգային գործերու մէջ չ'գործածուիլը վճարուած ըլլալ դատող ժողովին կողմէն : (Պայմանաւ սակայն որ դատապարտեալներէն ու անխօստուգանի կապերով միացած չ'ըլլայ դատող ժողովին անդամներուն հետ :

Գ . Տէրութեան գատարաններուն կողմէն զգաստացուցիչ պատիժ կրողները և չ'են :

Ահա հիմնական սկզբունքները սահմանադրութեան, որուն վրայ հիմնուելով քուէարկուն, առանց ո՛ր է ազգեցութեան կամ թեւաբարութեան, կը գրէ իր քուէն, բայց միշտ ինկատի ունենալով կարգ մը պարագաներ ալ, որոնք նախատեսուած չ'են թէ՛ և սահմանադրութեան մէջ, սակայն արդէն ընտրելու տարիքին հասնող քուէարկու մը փորձառութեան ուժով իւրացուցած կը ըլլայ անոնք :

Պէտքը չէ ուրեմն այս կամ այն անձին և կամ ընկերութեան պատրաստած ցուցակին հետեւիլ եթէ ճիշդ ալ ըլլան անոնք, ընտրողն է որ ընտրելոյն շատ մը հանգամանքները և յարմարութիւնները ինկատի առնելով իր գործերը վարելու պիտի հրաւիրէ այն մարդը, որ իր գործերովը արդէն վստահութեան շատ մը ապացոյցներ տուած է . ասկէ անդին

չ'են կրնար ընդունիլ որ կատարուած ընտրութիւնը օրինաւոր է և ընտրելիներն ալ ազգին շահը նկատի ունենալով օգտակարապէս պիտի ծառայեն անոր :

Եթէ մեր պախարակած գրութիւնը պիտի ընդունինք, այսինքն զանազան թեւադրութեանց հետեւելով պիտի գրենք մեր քուէներն, այն ատեն ո՛չ միայն ապացուցած պիտի ըլլանք որ մենք զուրկ ենք ուղիղ դատելու կարողութենէն, այլ և իրաւունք ալ տուած պիտի ըլլանք մեր ընտրելիներուն, որ պարզ հանգստարան մը նկատեն առաջնորդարանին ակունքները և տար կամ աւելի տարիներ շարունակ հանգչելով մեկին այն տեղէն, առանց հասկնալ ուղեւ թէ՛ ինչ պարտականութիւններ կը ծանրանան իրենց ուսին վրայ :

Բանի որ արդէն ընտրութիւնը կրտսլ չ'ափ լրացած են, այսպիսի կրնայինք խօսիլ ընտրութեանց եղանակին վրայ, սակայն թերևս պատահի ալ որ ընտրեալներուն նրկատմաւ առանձին առանձին խօսելու առիթը ունենանք :

ՄԵԼԻՔ ՄԱՆՍՈՒՐ

Պ Բարեւոյ Շահպաղ որ իր գրածներովը արդէն ծանօթ է եզրագրական «Արշալոյս» ի մեայուն եւ անձնուէր աշխատակից մը ըլլալու որոշումով հետեւեալ գրական յօդուածը կը դիմեմք հրատարակելու համար : Սոյն յօդուածի մասին զովստանակալ ըստ մը իսկ գրել աւելորդ կը համարուիմք, որովհետեւ արդէն գրութեան պարտականութիւնը այդ սարակոյսը կը փարսեւե ստեղծել շաւ հասկացողութիւն ունեցողներուն իմ անգամ :

ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ

Բա՛նն իսկ աղւոր է : Ան զարթնումի գաղափարին մարմնացումն է . գաղափար՝ սթափումին յօգնած ու ինկած էութիւններուն :

Ու անո՛ր համար պաշտելի է Յեղափոխութիւնը՝ կրակոտ հոգիներուն : Լճացումի հին փրատակին տապալումն է ան, ստրկացած աննախանձին ոչնչացումն է ան, անարժան անզգային խորտակումն, ու փառաւորումն է ազատութեան, վեհութեան, եղբայրութեան . ասոնց պսակաւորումն է . . . Յեղափոխութիւնը :

Արիւնի շունչին զեփուռն է ան վերակենդանացող, բունի դարուն մըն է մշտատեւ ձմեռին մէջը, հարուածն է՝ քնացող, շարունակական քնացողին գըլ-

խուս տրուած, ու կրտսայրիքն է կեն- սունակ, խրախճանքստ, առողջ հեռա- ւոր, ան անուշ կեանքին:

Ան է Յեղափոխութիւնը: Արիւն . . . Այո՛ արիւն, Արիւն . . . չկայ ալ ան բարեշնչում (evolution) ըստածը, հիմա ան ալ թուն մըն է եւ կեղծ արթնու- թեան ձեւին տակ կծկուած թուն մը, աւելի մեասակար, աւելի անբարոյ, աւելի զագիր քան իրաւ թմրածութիւ- նը: Ան է:

Բարեշնչումը սասկած դիակ մըն է ալ այսօր, այսօրուան մարդկութեան համար, ամէն յառաջիմութիւն արիւն- կը կարօտի:

Յեղափոխութիւնն է որ պիտի փրկէ չարչիւղող մարդկութիւնը: Աւ ան միայն:

Աւ ան կ'իջնուի ու պիտի ըսեն այս դաժան ճշմարտութիւնը, ու պիտի ցաւին այս ցուրտ իրակտնութեան հան- դէպ, մարդիկ՝ որոնք կը սուկան արիւ- նէն: Պիտի մեղքնա՛ն թափուած կայ- լակներուն կենսականութիւնը, պիտի ցաւին խողովակող ուղեղներուն վրայ, այն ուղեղներուն, որոնք կ'ընային երկ- նիլ շա՛տ արդիւնաւոր երկունքներու մէջ, մարդկութեան համար շատ օգտա- կար պատգներ:

Եւ սակայն չէ՛: Իմաստասէրը ըսաւ ան արդէն շա- առ՛նց. — « քորը սերմերուն մէջ ան՝ որ կուտայ ամենէն արագ եւ ամենէն առատ հունձքը, նահատակներու թափած արիւնն է: »

Արիւն ինչ աղբ է իրաւ ան հունձ- քը:

Կիչնան դուրսնեք, միտի զղլիւնի բորմունքէն մէջէն թափվող հեծկ- տու քնեղով ողողուն, դաշաք, կը ներկէի կը ներկուի՝ տակաւ առասպողներու տապալակներուն տակ եւ կը կակուղ- նայ անոնց արցունքներէն, իրեն մէջ աննկու համար կուտողին արիւնը, ա- զատութեան զակկին արիւնը, այն լուա- զոյն սերմը, որմէ՛ ապագային պիտի ծլի, պայծառ արալույսի մը ոսկեգծու- մին տակ, հանգստակէտ երանութեան Օրը, աշխատութեան պսակաւորումը եւ համերայութիւնը, հասարակութիւնը պարտականութեանց եւ իրաւունքնե- րուն մէջ, պիտի ծլի այն Օրը ուր Ա- ճիւր պիտի զագիր գոյութիւնն ունենա- լէ՛:

Եւ անա ինչու՛ այսօր, հիմա, պաշ- տելի է յեղափոխութիւնը:

Հետեւին հետեւ աղատագրումի ա- նուշ ձայնը աւաղեցին թէ՛ հայր ըս- կանք է կոտիլ, հայր սկսեք է նորէն պահանջել իր իրաւունքը մարդկային ընկերութեան մէջ: Եւ այս Աւետիսը Յարութեան խիստ արթնութիւնով զղբ- դիցնել սկսաւ սիրտը անոնց՝ որոնք մս- լեանդն են ազատութեան:

Ու չեմ գիտեր թէ՛ կ'ան տակաւին հայր որ չըլլան ատոնցմէ:

Կ'ան տակաւին հայր՝ որոնք Յե- զափոխութիւնը չը պահանջ:

— Սեղմեցէ՛ք կարգերը, — Համե- րաշխութեան պէտք կայ: Սիրոյ պէտք կայ ամէն մարդ իր զինքին ու . . . Յոռա՞ց . . .

Գեղեցիկ է, ա՛, ուս ուսի տրուած յոռա՞ջ խաղալ՝ զէպի բոնաւորը՝ անոր գանկին վըշտանքէն հանելու համար սեղմութեան կեանքը տառապողներուն:

Հիմա, ամէն հայ զինուոր պէտք է ըլլա՞յ: Հայ դարբիթալիսը իր շքեղանիստ ձեռք ի խորանէն, պզտիկ շատ պզտիկ պահ մը ասդին քաշուած, պէտք է ըզ- գայ ալ վերջապէս . . .

Հայ բրօշտարիւն պէտք է զգա՛յ, ինքն ամենէն աւելի, որովհետեւ իր արդար գատին առաջին փուչն է որ պիտի կոտորուի այս առաջին յեղափո- խութիւնով . . .

Հայ տիկինը պէտք է զգա՛յ, իր

թաշապատ բաղձոցներուն խորքէ՛ քաշ- ուած, ուսմաներու ընթերցումէն սթա- փելով քիչ մը . . .

Պէտք է զգան ալ քուր հայերը ու եթէ ընեն այն ամէնը զոր կրնան, հայր պիտի ունենայ բանակ մը, իտե- ալ բանակը համերայութեամբ թր- ծուն, կարծր անբակտիորէն, սեղմ՝ կարգերով, ամէն զինուոր իր գործքին զետակ:

Ու ան ատեն ինչ հրճուանիստ պիտի ըլլայ ինծի պէս ազատութիւն պաշտողին դիրքը: Նայիլ այն գործա- լորը, տիկինէն, քարթիթախտէն ու օրիորդէն հասարակաց կազմուած իս- չոր բանակը որ կը շարժի . . . կը շարժի, մեքենայի մը կանոնաւորու- թիւնովը զէպի Բանութիւն . . .

ԲԱՐՍԵՂ, ՇԱՀՊԱՉ

ԵՐԱՍԵԱՆ ՅՈՐԵԼԵԱՆ

Երասեան Յորեղանի Գանիիի Յանձնախումբը իր հաշտակալը ընկելով հետեւեալ սեղեկագրով Ազգ. Գաւառ. Վար- յուքան վասուցած է իր հաշտակալի, որուն նշանակումը հրատարակուի խոր- տած է սեղմը:

Գահիրէ 1 Մայիս 904

Գ. Եր. Յոյսէփ Կպկ. Այվազեան բարեխնամ Առաջնորդ և Նախագահ Ազգ. Վարչութեան Գաղաք. Ժողովոյ ի Գաղաքիս

Վասպուրականի ազգային բազ- մարդին դաստիարակ Տիրաչ Զ. Ե- րասեանի կրթական գործունէութեան 25 ամեայ տարեդարձին աւթիւ Ե- դիպտահայոց մէջ նուէրներ հաւա- քելու գործին համարանցեալ տար- լույ Մայիս ամսոյ մէջ 26ր Սրբազ- նութեան նախագահութեան ներքե կազմուած Յանձնախումբս իր գոր- ծառնութիւնները աւարտած ըլլա- լով, պատիւ ունի մատուցանել 26ր իր հաշտակալը:

Ինչպէս կը տեսնուի ներկայ հաշ- տակալէն, Եդիպտահայ Ազգ. մե- լազնեայք համակիր եւանդեամբ ու ազգասիրական ու կրթասիրական ոգ- ւով վառուած՝ պատասխանեցն մեր հրաւերին, և գոյացած է, ծախսե- րէն զատ, 115 ու կէս անգղիա- կան ոսկի, այսինքն (11261 1/2) տասնու մէկ հազար երկու հարիւր վաթսուն և մէկ ու կէս զըշ. ուղ. և տասը փարայի գումարն, ուրիշ (50) յիսուն անգղ. ոսկի անցեալ տար- լույ Օգոստոս ամսոյ մէջ 26ր Գերա- պատուութեան միջոցաւ արգէն զըր- կուած է առ. պատկանեալն և մնաց- եալ (65 1/2) վաթսուն և հինգ ու կէս անգղիական ոսկի արժողութեամբ տեղւոյս Գրէտի Լիօնէ և Օթօման Պանքայի 3 կտոր չէքերն ալ վեր- շերտ յանձնուեցան 26ր Գ. Պոլսոյ Պատրիարքարանի միջոցաւ Յարեւա- նի Կեդր. Պատ. Յանձնախումբոյ Գեր. Նախագահին հասցնելն զըկը- ունելու խնդրանքը:

Այս աւթիւ նուիրական պարտք մը կը համարենք, Սրբազան հայր, մեր ջերմագին շնորհակալութիւնն յայտնել ըլլոր աղին նուիրատու ներուն, այս մարդասիրական գոր- ծին սատարողներուն և Աղէքսանդ- րիոյ առաջնորդարանի Տիրաչ գրեա- նապետին, ինչպէս նաև երկու քա-

ղաքաց մէջ հրատարակուող «Արշա- լոյս», «Ազատ Բեմ», և «Արտեմիս» կը- րագրներու Պատ. Խմբագրութեանց, որոնք նուէրներու հաւաքման, և ին գործերու մէջ մեղ ընձեռեցին ի- ընդ աշակցութիւնը, յիշեալ ազ- դօգուտ լծերէն մէջ մեր զանա- զան ծանուցումները, նուիրատու- թիւնները հիւրընկալելով շանացին մեր գործը դիրացնել և յաջողու- թեամբ ի կատար հանել:

Կը վերագրարձնենք նաև 26ր Սրբազնութեան Պատ. Գաղաքական ժողովոյ վաւերացուցած ժապարի- եալ տու. մարը, և կը լսնդրենք որ եարեհաճիք ըստ օրինի հարկ եղածն ի գործ դնել:

Սրգիական անձամանօք հարաւ- րելով

Մամբ խորին յարգանք

Երասեան Գահիրայի Յանձնախումբին

ՄԿՐՏԻՉ ՊԼՅ ԸՄԱԿՈՍՈՅ, Ատենապետ

Յ. Մեթեան Ատենապետ

Յ. ՕՀԱՆԵԱՆ Գահիրայի

ՏՐ. ՄԱՀՕՔԵԱՆ Հաշտակալ

Անդամք,

ԱԻԵՏԻՍ ԳԱՀԱՆԱՅ ՇԱՀՈՅԵԱՆ

Յ. ՓԷՀՐԻՉԵԱՆ

Ծանօթ. — Հաշտակալ յալորդ թուով պիտի հրատարակուի:

ՏԱՐԵԻՐՈՒԻ ՀԱՆԴԵՍ

Անցեալ թուով ի լրոյ կը ծա- նուցանէինք թէ՛ Հայոց Բարեգոր- ծական Ընկերութեան սրճարանին Ընդհ- Վարչը, Տիրաչ Միսաք Սարգիսեան որոշած է շքեղապէս տնել Աղբ. Սահմանադրութեան տարեդարձին հանդէսը Հայոց սրճարանին մէջ, ուր երբեմն տեղի կ'ունենար և այն- չափ ալ կը գնահատուէր Հայ ժո- ղովուրդէն: Գլխաւորաբար Մեծ. Ա- ռաքել էֆ. Պէրպլեանի կը պար- տէինք անոնք:

Տիրաչ Միսաք Սարգիսեանի ու- թոյնով չափազանց նպատակաւոր- մար գտանք թէ՛ և, սակայն կը մը- նար իրողութեան մօտէն ծանօթանալ թէ՛ արդարեւ այդ սրտումը գոյու- թիւն ունէ՛ր. ու եթէ ունէր՝ այդ ծրագրին պարունակութիւնը Սահ- մանադրութեան նման կարեւոր տա- րեդարձի հանդէս մը տնելու պատ- չանապէս կը յարմարէր:

Ստոյգ աղբիւրէ մեր ստացած տեղեկութիւնները ամէն տեսակետով շատ նպաստաւոր էին, և յանդու- գըն ալ չէինք կրնար անուանել զա- նոնք. որովհետեւ Տիրաչ Սարգիսեա- նի նիւթական կարողութիւնը թոյլ կուտար իրեն այդ սահմաններուն մէջ բարձրանալու, պարզ բայց իր պարզութեամբ մէջ, հասարակցին թէ՛ շատ շքեղ պիտի ըլլայ այն, և Ե- դիպտահայ գաղութին պտուղաբեր և ինչպէս կարելի էր սպասել որ անհատ մը 50—60 սակիներ մէջտեղ դնէ, պարզապէս ազգային Սահմա- նադրութեան սեւուկի աչիւրուն համար. . .

Եթէ տիրաչ Սարգիսեան իր այս

ծրագիրը երեսփոխաններուն ընտը- լութիւնները սկսուելէն յառաջ դիտողներ, հաւատացէ՛ք որ առանց վարանելու զինք ընտրելեաց եւս- պատիկ ցանկին մէջ պիտի անցնէ- ինք և արժանի էր այդ պատուոյն, ինչու՛ գիտէք սրտով հետեւ այս տար- ուան ցանկին մէջ այնպիսի անուններ կային, որոնք եթէ ընտրուելու բաղ- զին արժանանային, անպատճառ ի- րենց առաջին մտածումը պիտի ըլ- լար առաջնորդարանը իր մարդերով պատահական արկածներու դէմ ա- պահովել, լոկ զորքով մը բրնջելու համար այդ գործարկութիւնն ալ ին- չու՛ ետ ձգել Տիրաչ Սարգիսեանը, որ ո՛չ իր այն գործարկի վրայ չ'մտա- ծեր, ույլ՝ իր քաղկէն գումար մ'ալ կը արամատիւրէ, միմիայն հանդիսի վայլն աւելցնելու համար, ի մեծա- րանս Սահմանադրութեան և ի պար- ծանս Եդիպտահայոցն:

ՅԱՄԻԿ

Յ. Գ. Վերջին պահուն կը տե- ղեկանանք թէ՛ Տիրաչ Սարգիսեանի առաջարկին վրայ Մեծ. Առաքել էֆ. Պէրպլեանի իր բարոյական ա- ջակցութիւնը խոստացած է տարե- դարձի հանդիսին նոր դարկ մը տա- լու աղին մտածումով:

ԱՂՁԳՈՒՅԻՆ

ԼՈՒՆԻՔԵՐ

Բնականաբար այս պահուս ազ- գային շըլապալը ու ազգայիններուն մէկ մասին միտքը ամենէն շատ զբաղեցնողը երեսփոխան ժողովոյ ընտրութիւններն են:

Կենք՝ այս պարագան իբր լը- րագրական պարտականութիւն մը, և մանաւանդ որ յատկապէս խնդ- րուած ալ էր մեղ մէ, ծանուցինք ար- ղէն մեր ընթերցողներուն—ըլլան անոնք Ձերիսովստի, ըլլան վճարող միշտ առաջիններուն թիւը եւս պա- տիկ և աւելի ընդունելով— Այժմ չահեկանութեան զուրկ չ'պիտի ըլլայ ընտրութեանց արդիւնքին վրայ խօ- սիլ, որը շատերու ըմբռնած եղանա- կէն դատուելով, քննադատութիւննե- րէն ազատ չ'պիտի կրնայ մնալ կըս- ուի:

Մայիս 22ի կիրակի օրը, հեծ- եալ ու հետեակ ոտիկաններու զու. մարտակով մը պաշարուած էր կ'ըսէին հայոց եկեղեցին. Եթէ և- կեղեցույ պաշտօնեաներէն մէկուն տուած առդարացողի բացատրու- թեանը նայինք, կ'ըսէ թէ՛ ազգա- յիններուն մէջ ցրտւումը ազգա- րարութիւններէն ոտիկանութիւնը տեղեկանալով որ այդ օրը ընտրու- թիւն պիտի կատարուի, ինքնաբե- ըրաբար փութացած էր իրեն իրենց ընտրող ընտրողներէն հարաւորագ- րանք իրենց տուած չէր ըրուեալե- լու իրաւունքը, այսինքն՝ ընտրող- կան ժողովը, ըստ իւր ծանուցման, Մայիս 15ին երկրորդ շըլապալա- նով մը ընտրելեաց եւս պատիկ ցանկը զբաղ չէր անոնց. սակայն ի- րականութիւնը կը կարծենք թէ՛ այն է որ ոտիկանութեամբ ինքնա-

Յ. ՓԷՄՊԵՃԵԱՆԻ ԸՆԿ.

ՍԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԻՐԱԿՆԵՐՈՒ ԵՒ ԵԿԻՊՏԱԿԱՆ ՍԻԿԱՐԷՐՆԵՐՈՒ ՅԱՏԿԱԿԵՆ ԿԱՏՐԱՏՈՒՄ ԱՆՈՒՅԵՆ ԱՍԻՍԿՆԵՐ

Գ.Ա.ՇԻՐԷ (ԵԿԻՊՏՈՍ)

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՒ ՎԼԵԱՍՈՒՄ ՄՊԵՐՄԱՆՈՅ ԷԿԻՊՏԱԿԱՆ ԿԱՏՐԱՏՈՒՄ ԶԻՆ ԶԱԳՐԵԻՒՄ ԴԻՄՍՑ ԷՆՈՒԱՅՐԱԿԱՆ ՀԱՍՏԿՆԱԿՆ—ՓԷՄՊԵՃԵԱՆԻ ԹԵԿՓՈՒ ԹԻՆ 689 ԵՆՈՒԱՅՐԱՏՈՒՄ ԹԻՆ 129

Երբարար եկած ըլլալու չէր և մասնաւոր հրաւեր մը զանոնք հոն բերած էր. մանաւանդ թէ՛ մեզի լուր տուող եկեղեցւոյ պաշտօնեան ալ որչափ դատողներ եղած են իր ընթացքէն, աւշա-եծրախեմ կեղծիքի մարմնացումը դառնալ կուզէ հիմա, բայց ընկալանքար տրամաբանել չը գիտցող միտքերուն համար:

Ինչ որ է սակայն, ոստիկանութիւնը քուէի առաւելութեանց վերայ ո՛ր է ազդեցութիւն չէր կրնար ունենալ ու չունեցաւ ալ անշուշտ, հետեւեալ այդ պարագան կարեւորութիւն ունի միայն՝ մէկ մը դիմելով հրաւիրողներուն, մէկ մ'ալ ազդեցութիւն անհատականութեան արժանիքը գիտցողներուն համար. ուստի կանցնինք այս ոստիկանական հրաւերին վրային, ու կը դառնանք բուն խընդրոյն, որ է՝ ընտրութեանց արդիւնքը:

Ինչպէս լուր կը տրուի մեզի, ընտրելու իրաւունք վայելիչ չէր համար ազդային ատորք վճարողներու թիւը, մինչև ընտրութեան օրը հասած է 251ի, որ տեղի ունեցած ընտրութեանց հիմը բռնելով, — առանց բարդաւորութեան դիմելու. Կա. հիւրէնակ հայոց մէջէն ընտրուելու իրաւունք ունեցողներու թիւին հետ որոյ մէկ չորրորդին հազիւ կրնայ համեմատել ընտրողներու թիւը—126ը առաւելագոյն թիւը կրնայ նկատուիլ հետեւեալ եօթն անձնաստորութիւնէն: Ըր ըստ այնմ քուէից առաւելութեամբ ընտրուած են:

Table with 2 columns: Name and Count. Includes entries like 'Վանք. Տիգրան Բաշա' with count 202, 'Պօղոս' with 142, etc.

ԹԵՐԹՈՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

ՍԵՆ ԱԿԱՍԱՆԴԷ Հեղինակ ԲԵՒՈՒ ՍԱԼ

ՄԱՍՆ ԵՐԿՐԱՐԻՔ ԿԼՈՒԽ Է.

ԱՏՐԷՆ ԼԱՐՏԻՆՈՒԱ

—Ո՞ր կինը, Մայր. —Ձեմ համարձակիր այդ անունը ձեր անվե արասանելու, ըստ Տիկին Լարտինուս, ցած ձայնով մը: —Նէ՛, գոչեց Տանիէլ. ա՛հ, չարտարայն վերջապէս ամեն ինչ պիտի հասկնամ. . . Պ. Լարտինուս բառական չհամարեց իմ պարաքերուս վճարումը իր վրայ առնելով. . . —Ձաւակ՝ս, դուն այժմ կրնտ հասկնալ թէ՛ մենք ի՞նչ վիճակի մէջ կը գտնուինք եւ որչափ իրաւունք է Ատրիէնի կացութիւնը: Այս ամօթալի արարքները կարող էի գրով իմացնել քեզի: Պէտք չէ՞ր որ՝ ընդհակառակը իմ քաղ-

Իսկ համեմատականի մնացած են հետեւեալ տասն եւ չորս անձինքը

Table with 2 columns: Name and Count. Includes entries like 'Վահրամ Մանուկեան' with 124, 'Մարտիրոս Արիեան' with 114, etc.

Կ'ըստի թէ՛ համեմատականի մնացած երեսօթականներու ընտրութիւնը տեղի պիտի ունենայ (Հ. Տ) Մայիս 23ին, որ Սահմանադրութեան հաստատման արեւդարձի նախորդ օրն է:

ՀԱՅ ՀՆԱՐԻՉ ՄԸ

—Ինչի Պոլսեցի Տ. Թարգոն Մեղրեան, որ քանի մը ամիս է վերաբերեալ կը գտնուէր. իր հնարած ջրային գործիքը՝ այսինքն քիչ ուժով շատ արագորով մեքենան կատարելագործելու համար, իր այդ կատարելագործումը միջոցին՝ յղացաւ ձայնածափ կամ խօսուն—ժամացոյցի գաղափարն ալ: Ձայնածափը մէկ անգամէն, որոշ եւ մարդկային բարբառով պիտի ըսէ մեզ թէ՛ ժամը քանին է: Նոյնպէս պիտի կրնայ օգտակար եւ հաճոյալի անձինքն կանխոր պատճառով: Իստի յոյս. քարի ախարձակ, քարի գիշեր եւն. մաղիկը մեզ մեր մայրիկի կամ ուրիշ բազմապատ լեզուով մը: Պիտի հնչեցնէ ազգային քայլերը կամ ո եւ է երաժշտական կտոր, ըստ հաճոյից:

ՀԱՅՏՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Ժողովացի Տի Գեորգի հետեւեալ կ'ըստով հատուած մը կ'արտագրէ ֆրանսական թանկ լրագրէն:

Ժամանակն է կ'ըսէ թանկ (մինչև հիմա ժամանակը չէ եղեր. Մ. Ս.) որ դիւանագիտական աշխարհը լուրջ ուշադրութիւն դարձնէ դէպի դժբաղդ Հայաստանը, ուր տեղական կեղծքուստերը դադար առած չեն եւ ջարդերը կը վերստին:

Սասունէն առնուած լուրերը շատ ազդեցութեամբ են. Թուրք հպատակները ասպատակներու տուած նեղութիւններէն ազատելու պատրուակաւ, հրահանգ կը տրուի վալիին կողմէ որպէսզի Համիդիէները և Բիւրսերը չարչարեն անտէր ժողովուրդը. ուստեց հասուցած չարքերը նկատողութեան չեն առնուիլ կառավարութեան կողմէ եւն:

ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

Շիֆաի 14 Մայիս. —Տէլի նիւզ Երեւանի Եւ-Մարիէ կը տեղեկանայ թէ՛ ձարնները Տարիկն ուրախութեամբ վերջ գործերը ցամաք հանելով փոքրիկ պաշարած են ծովու եւ ցամաքի ձարններէն ու շատ հարուստ կանխիկ թէ՛ այժմ փառքի ինչ ճիւղերն են: Ս. Բեքրայուրի 15 Մայիս. —Մոյսիկ Ալեքսիեմ երեկուան քուսակաւ արդի կոշիկներով վրայ երկար տեղակալը մը որպէս է, որուն նախընթաց ընդհանրապէս չէ եւ կը հաստատ թէ՛ Բորք-Արիսր թէ՛ Եւրոպայի պաշարման վիճակի մէջ կը մնայ, քայց առանց զինուորական

վստեղատու գործողութեան մը առաւելան շրջալու:

Ս. Բեքրայուրի 16 Մայիս. — Չարք աշուտ երկոյ մեկնեցաւ փառքիէն. նա Խարթոյ եւ Բիւնի կերթայ պատերազմի գնացող զորախումբներուն ոչոքեր մայրքելու համար, եւ իր քուսակաւով իր 10 օր պիտի ճննէ: Ս. Բեքրայուրի 18 Մայիս. — Չարք Բոյրայուրի մէջ ծառագոյն առնելով մեկնող զորախումբերը այժմ անցումը:

Մոսկէն 19 Մայիս. —Մանչուրիոյ մէջ 160, 000 ձարնեցիներ կան այժմ:

Այս քուսակ վրայ 100, 000 հոգի կ'ստանան կը փայլեն համակիտ ռազմաքուսակներ:

Շի-Էու 19 Մայիս. —Տարիկի զարկակները կ'ըսեն թէ՛ փարագները ու նախադրուածները փանդելու համար Ռուսներուն քրտմ փոստերը այսպէս կ'ըսեն, քայց թաւթիկէն վալի երկարք փարագները փանդուցան:

ՏՈՐԹՈՐ Օ. ԿԻԼԼԵՂ

ՏՐ. Օ. Կիլլեղ ժամանակէ մը է վեր Գահիրէ հաստատուած է. եւ նորապէս գրութեամբ կը դարձանէ ամեն տեսակ հիւանդութիւններ: Իր ժամանակաշրջանին է քայց է գանազան ախտերու բուժումն, աղանջի, քիթի եւ կոկորդի հիւանդութեանց դարձումը, ինչպէս նաեւ ի մասնաւոր ի մանկանց հիւանդութիւնները: Առաւօտեան ժամը 9—11 եւ երեկոյան 5—5 հիւանդ կը դարձնեն իր բուժակարանին մէջ ի Մուսքի Սէնապիլի դամպը: Վկայեալ աղքատները ձրի կը դարձանէ:

ցարքարոյութեան և հնազանդութեան մէջ փնտռելի այն միջոցները, որոնցով դարձի բերել կարենայ այս մարդը, որ ժամանակաւ մեզի նկատմամբ այնչափ բարի, խանդաղատալից եւ դորովագուժ վարուող մը ունէր:

Իստիկի մէջ քու ներկայութիւնը ուրիշ քանի չ'պիտի ծառայէ, բայց եթէ հրահրել տնոր կիրքերը, եւ երբ տեղեկանայ թէ՛ Ատրիէն քեզի կը պաշտէ քեզի պէս դայն ալ պիտի արամարձէ. . . ա՛հ, նախամեծար պիտի սեղէի հրաժարել այս գաղափարէն. . . նա քեզ լըսած վայրկեանէն՝ տնական ծախուց համար մեզի յատկացուցած գումարը կէս տո կէս դեղջեց եւ սոսր փոխան զմեզ պարտաւորեց ապրիլ այնպիսի կեանք մը՝ ուր առանց ձայրանել խնայողութեանց կարելի չէր զիմադրել անոր. նա այսպէս բնակով ապահով կը լինէր թէ՛ քեզի գրամ զըրկելու: անկարելիութեան առջեւ կը զբառնուինք. . . ա՛հ այն աւերուցողները որ այս կ'ընդ կըրցաւ գործել եւ ես տարակոյս ունիմ թէ՛ առնցմէ տակաւին աւելի ծանրանին ալ պատահելու են. . . —Ես անոր ժամանակ չ'պիտի աամ յայտաբարեց Տանիէլ գառնութեամբ մը: —Ո՞նեմ եղի՞ր, Տանիէլ, կը պա-

ղատիմ և զգուշացի ծանր դէպքերու պատճառ առջէ. ինքզինքը չարաւորէ, մտածելով որ եթէ մենք իրաւունք ունինք ինքզինքիս պաշտպանելու, սակայն իրաւունք չունինք հօրը եւ աղջկան մէջ գծուած ինչ սերմանու:

—Ապահով կ'ըլլի, մայրս, Պրազիլի մէջ ամենէն չարքայ կեանքը ապրեցայ. կեանք մը՝ որ ինչպէս կ'ըսուի, (1) mis du plomb dans la tête դիւ կատարելագուս լրջացուցի Մի՛ վախճաք թէ՛ ամենափոքրիկ անխոնքութիւն մը անգամ պիտի գործեմ. ես այլ եւս ձեզի այնչափ վիշտ պատճառող անհոգ երիտասարդը չեմ եւ Զրանսա կը վերադառնամ ձեր հանգիստը ու երջանկութիւնը գոյացնելու որոշումով. եւ այսօրուքն ըսկակաւ, որչափ ալ գծուարին ըլլան այդ ջանքերը, պիտի աշխատիմ Պ. Լարտինուան այդ աղջկէն հեռացնելու՝ ձեր խնամքին յանձնելու համար դայնս եւ իմ ջանքերս ի՛նչ ընդունելութեան ալ որ

ՄԱՆՈՒ. — Metire du plomb dans la tête à qu. կը նշանակէ հրացանի կամ ատրճանակի հարուածով մէկուն գլուխը ջարջալիս: անխորհուրդ մէկը լրջացնելու իմաստով կը գործածուի:

հանգիստին իր կողմէ. նա յանձին իմ պիտի գտնէ յարգանս արժանի դաւակ մը. . . զուտակ մը սակայն, որ ամեն ինչ կարգի բերել կը ջանկայ. Ատրիէնի սէրը, որ իր նախախնայութեամբ մէջէն կը գուշակէի առանց յուսալ համարձակելու, պէտք եղած օժանդակութիւնը պիտի ընէ ինձ, իմ ծրագրերս իրականացնելու համար:

—Շնորհակալ եմ, սիրելի դաւակ, ըսաւ Կիլիկի Լարտինուս, դայն գրկելով: Այս վայրկեանին Ատրիէն վերադարձաւ Տանիէլին քով իր տեղը բռնելու համար, իսկ այս վերջինը՝ ժպտելու փորձ մը ընկելով՝ ըսաւ:

—Ուրեմն Պ. Լարտինուս դիւրութեամբ չ'պիտի ընդունի, եթէ ինքզինքս իրեն փեսայութեան առաջարկեմ: —Իսուական զօրութեանց պատճառ պիտի ըլլայ այս, ըսաւ Ատրիէն վեհանախագէս, բայց զօրութեանց ինչն էր թող քեզի վախ չ'պատճառեն:

—Յաջողութեան արժէքը ու՞ր կը մնայ, եթէ մարդ զօրութեանց ինչն էր թող քեզի վախ չ'պատճառեն:

—Ինչն էր մասնաւորապէս կ'ըսուցի զայս վայրկեաններու մէջ հոս կը հասնին, յայտեց տիկին Լարտինուս: Զեքնան Տէրօ-

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒՉ Ժ. ՆԱՅՏԻՆԿԵՐ

Պատվաբե քաղաքի խաղաղության սեփականություն, Պրիմորյ Օբլաստի
ճիշտ դիմաց Գաթե Տր Լա Պուրսի կից

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՏԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԵՒ 6500 ՄՈՍԿՈՎԻՏԻՆԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լուսաբոյն կարի մեքենաները ՄԻՆԿԸՐՆԵՐն են և ամենցմէ
մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :


400 հ աւելի վիսյախան և անաղանդ վարձարուած, երաշխաւորեալ մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵՆՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արտնետանմանիսին մէջ ստացած է :
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ ԿԱՅՆԵՐԱԿԱՆ
ԵՒ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՍՏԻՎԱՆՍԻՆ

Կեղծերէն զգուշանալ,
ուշադրութիւն դարձնել
խրաքանդութիւն մեքենայի
վրայ ՄԻՆԿԸՐ յաւերակնի



Չրի դասեր և նորոգութիւններ,
ՍԻՆԿԸՐ մեքենան
յից համար, յաճախորդաց
տուններուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն չիներու
և նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

ՀԱՍՑԵՆԵՐ

1. — ԵՂԻՐԱՐ ԶԱՄՈՒՐՆԱՆ. — Վաճառա-
տուն ամեն տեսակ գուլպաներու, պատ-
րաստ գոյալը չափիկներու, մետաքս և
բարեկարգ թաշկինակներու, Եւրոպական
և անգլական կոշիկներու, քոնսպիւնի
ծոխ դանդաղանութիւններու :
Շարտ Գլուտ-Պէյ Թիւ 286. 490

ՀԱՅՆԵՒԻ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԶԱՆԵՇՏԱԿԱՆ

Բաժնեկիւն՝ Եզրկապոսի համար տարե-
կան 50 դր ռը : Արտասահման՝ տա-
րեկան 13 ֆրանկ :

ՀԱՍՑԵՒ Mr. DIRAN PAPA ZIAN
(Egypte) Alexandrie

չի սպանու թիւնէն ի վեր խորթ հայրդ ա-
ւելի շատ բարկացած է յեղի դէմ . . .
բայց թերեւս դուն այս ստեղծել արդէնքէն
անդեղութիւն ալ չունիր . . .

— Եթէ զիտնայի՝ ըստ Տանիէլ քիչ
մը զողալով, դէթ պիտի հասնայի թէ
ինչ ըսել կուզեն սա լրագրիւնը. թե-
րեւս զուր անոնցմէ աւելի զիտեք այս
բաները :

Տանիէլ կը յուսար թէ՛ իր մայրը
կարեւոր անդեղութիւններ պիտի հաղոր-
դէր իրեն և լսելու պատրաստակա՞նու-
թիւն արտասայտող շարժում մը ըրաւ,
սպասելով տիկին Լարաինուան պատաս-
խանին :

— Ո՛չ աւելի բան մը չենք զիտեր-
զաւա՛կս, այդ հարանսեկան հանդիպին
մենք ալ ներկայ էինք. ինչպէս դու ալ
պարտիս աննեղ՝ որովհետեւ անոր պատ-
մութիւնը լրագրաց մէջ կարգացած են,
իսկ այն օրէն ի վեր այդ մասին մենք
ո՛ր եւ է անդեղութիւն չունեցանք :

— Բայց թերեւս եմ խորթ հայրս զի-
տէ՛ . . .

— Մենք ալ զմասին անոր ամբողջ
բան մը խոսելու չենք համարձակիր, ո-
րովհետեւ այս օճրոյն մէջ ամբաստանու-
ղը քու բարեկամք է . . .

3. ՎԱՀԱՆ ՄՈՐՃԵԱՆ. — Կը պատ-
րաստէ ոսկիէ և արծաթէ զարդա-
նկար-միջնիչի և գրուագեալ դա-
ւադաններ : Ապաինի դարազօրին դի-
մաց, Սփինքս դեղարանին կից, և
մասնաճիւղ ունի ի Շարտ Մուհամ-
մէտ Ալիի, Աթթէթ-էլ-էնյապ թիւ 1
392—492

4. — ԿԱՐԱՊԵՏ ՔԱՍԱՐՃԵԱՆ. — Նպա-
րազման : Ընդ միշտ թարմ պարանդ-
ներ վաճառելու որոշում տուած է :
Պապ էլ խալք : Հացագործին գիմաց :

2. ԱԻԵՏԻՍ ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ. — Դեր-
ձակ. Մանսուր բաշա խալիճ, թրած-
վէյի գրծին վրայ : 490

—Օ՛հ, Մարտիալ անմեղ մէ՛, ընդ-
հատեց Ստրիէն, ես անոր տեղ կ'երդ-
նու՛մ :

Այս խօսքերը Տանիէլի մ'անչափ ու-
րախուժիւն պատճառեցին. որ գրկեց իր
մայրը ինչպէս նաեւ երիտասարդուհին՝
ըսելով .

—Այս բանը ինձի յայտնուողս կ'ա-
պահովցնէ թէ՛ հակառակ այն բոլոր ա-
պացոյցներուն որ անոր դէմ կուտակ-
ուած են, զուր իմ բարեկամս անմեղ կը
նկատէք, իսկ ինձի գալով, չեմ ծած-
կեր որ ինքզինքս պարտաւորեալ կ'զգոմ
ամեն ջանք ի գործ դնել այդ ամբաս-
տանութիւններուն կեղծութիւնը սպա-
ցուցանելու համար : Այս օճիւրը թուեալ
է որ ես ինքզինքս արտաւարեալ կ'զգոմ
զգայի ձեռք վերստանելու առթիւ : Հալ-
բի մէջ անդեղացայ այն եւ այնչափ յուզ-
ուեցայ՝ որ պարտաւորեցայ իմ ճամբաս-
չարունակելու համար քանի որ օր հան-
զըստանալ . . .

—Ահաւասիկ հայրս կուզայ, ըսաւ
Արիէն՝ որ պատահանին առջեւ կը
դանուէր :

—Աղէկ ըսաւ Տանիէլ հանդարտու-
թիւմ մը. անոր հասնելէն առաջ պէտք
է որ համաձայնիք այն հասցէին փրայ՝



5. ԽԱՉԻԿ Ս. ԷՏԻՐՆԷԼԵԱՆ. — Ա՛ւհն
տեսակ մետաղէայ կարասիք կը նո-
րագէ, կը մաքրէ, կ'ուկեղծէ և
կ'արծաթագծէ խիստ տակուն և ան-
հաւատարի արժան գնով :
Խան-Խալիլ Մա'աթիս քաղաք, 490

6. ԱՐՇԱԼՈՅՑԻ ԽՐԱԿԱՐԱՏՈՒՆԸ. —
Մախու գիրքեր : Հաւարածոյ չորս
տարուան Արշալոյսնու, գին 240
դր. ռը : Ցուեղքը Հայրենեաց (քղ-
րակալով) 10 դր. Ազգային Սահմա-
նադրութիւն, 12 : Սասուն և Չէյ-
թուն, 10 : Կոչ Մատո, 8 : Չուարճալի
անեղտութիւն, 5 : Հիւժախտի դար-
մանման ամենայնջող միջոցը, 3 :
Ճամբորդութիւն ի Ջուիցերիա, 3 :
Եզրկապոսի գունատուր քարտէսը,
ղեկչեալ գիւնքով :

ՎԻՊԱԹԵՐՊ

ՀԱՆԴԻՍ ՎԻՊԱԹԵՐՊԱՆ

Մեր հրատարակած երեք վէպերէն
յետոյ, այժմ ձեռնարկած ենք ամսական
պարբերական հրատարակութիւն մը,
ՎԻՊԱԹԵՐՊ անունով, որուն առաջին
և երկրորդ թիւերը (Յունիւմ և Փետր-
արդէն հրատարակուած են, հետեւեալ
բովանդակութեամբ :

- 1. ՄԵՐԹՈՒԱՆ ՍԷՐ, Պոսական
կեանքի գրուագներ, ազգային վէպ,
գրած է Պ. Ն. Սրմաքէլիանլեան :
 - 2. ՏԻՆԱՄԵՆԻ ԵՒ ԳԱՂԱՏԻՐԻ ՀԱՄԱ-
ՏԱՔՆՆՈՒԹԵԱՆ, հեղինակութիւն Պ. Պ.
Մաթիոյի և Լոնէլի :
 - 3. ԿՈՐԶՐԻՒՄ ԴԱՏ, Ֆոթիլիւնէ
տիւ Պոսակալի :
- ԲԱԹԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆԸ
Պուկարիա տարեկան 5 ֆր. Արտասահ-
ման տարեկան 6 ֆր. Ամերիկա 1 սոլ :
20 սէնդ. Թուրքիա՝ 2 րուպ. 30 կոպակ :
ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆ
Հասցէ՝ REVUE VIBATERT,
Imprimerie Orientale, VARNA Bulgarie

որով մենք պիտի թղթակցինք, թերեւս
նա ինքզինքին թույլ կուտայ մեր թղթ-
թակցութեանց վրայ հսկողութիւն ի-
գործ դնելու : Ես իմ նամակներս՝ Ա. Լ.
սկզբունստաւորով քար-ոքարանդ կ'ու-
ղարկեմ և զուր՝ եթէ ինձի զննուցա-
նելու բան մը ունենաք, մեր երեքին և
Մարտիալ բարեկամս օգուտին վերա-
բերեալ երկու նամակ պէտք է ուղղէք
ինձի մին՝ յանձնակատարի մը, հրա-
մայելով որ՝ կրանտ-Օթէլ՝ ուր իջեալ
նստեմ ես նախատեսելով որ իմ հոս
բնակիլս անկարելի պիտի ըլլայ - բերե-
լով ուղղակի ինձ յանձնէ. իսկ միւսը՝
Սէնթ-Աստրէս կուպելուպեա Պէրթրանի
հասցէով պահարանի մը մէջ գրուած . . .

—Քու հին բարեկամիւն :

—Այո՛, Պ. Լարաինուան ընթացքը
այնպէս ցոյց կ'ուտայ թէ՛ ես պարտա-
ւորեալ պիտի ըլլամ զգուշութիւններ
ձեռք առնելու ամէն տեսակէտով, նոյն
իսկ կը տարակուսիմ թէ ջանքեր պիտի
ընէ իմ հասցէիս քար-ոքարանդ ուղղը-
ւած նամակներն ալ ձեռք անցնելու .
արդ՝ որովհետեւ կարելի է որ ես Հալք-
ուած նամակներս գողնայ, ինչպէս որ
Մարտիալին ինձի ուղղած մէկ նամակը
գողցած էր :

ՅԱՆՁՆԱԿԱՍՏԱՐ ԲԵԹԻ ԵՒ ԸՆԿ.

(Commissionnaires Expéditeurs)

Պատիւ ունիմք ծանուցանել յար-
գոյ հասարակութեան՝ թէ՛ Եզրկապոսի
և Կ. Պոսոյ միջև ամեն տեսակ պարա-
նաց յանձնարարութիւններ կ'ընդու-
նիրք զոնացուցիչ պայմաններով, ըս-
կզրուք ունենալով

ՎԱՏԱՀՈՒԹԻՒՆ, ՀԱՄԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ
ԵՒ ՃՇԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Կը յուսամք թէ՛ առևտուրով
զբաղողները, որոնք միշտ պէտք կ'ու-
նենան զանազան տեսակ պարանդնե-
րու, գորս չեն կրնար ձեռք բերել Եզրկա-
պոսի մէջ, պիտի յարգեն մեզ իրենց վա-
սանութեամբ :

Դիմել առ Արմենակ Համաձեւան :
Շարտ Մուհամմէտ Ալի. թիւ 3-4.

ԲԷԹՐՈՒՆ ՎԻՊԱԹԵՐՊ

Դժգոհութիւնները շատցած են այս
վատարանին առկուտութեանը դէմ :

Անկէ ունեցողները՝ որոնք թուով
չաւ են հիմայ, մէկ քանի ամիս միայն
զորածնէ վերջ ստիպուած են մէկ կողմ
գնել զայն, անոր պատճառած արտեղու-
թիւններէն աղատելու համար :

Հայ մեքենագէտ մը ամսական վեր-
ջագէս կըրցած է լուծել այդ վատարանին
զազանիքը և հիմակ մեծ զիւրութեամբ
կը նորոգութիւն անոնց աւրուած մասերը :
Եթէ կ'ուզէք օգուտիլ հայ արուես-
տագէտին միջոցներէն, ձեր բնթրոյի
վատարանները ուղղակի տարէք Պաղար
Մուրաթ թիւ 32, ՀՐԱՆՏ ՓԱՓԱՉԵԱՆ-
ՆԻՆ և ասպանողպէս շատ գոյ պիտի
մնաք անոր նորոգութիւնէն :

ՀՐԷՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎՊԱԹԱՆԻ ՎԻՊԱԹԵՐՊԱՆԻ					
ԵՐԿՈՒՇԱԹԻՒ 23 ՄԱՅԻՍ 1904					
8050	6581	5677	11580	2223	
109	180	284	563	888	
973	1438	1526	1545	1614	
1914	2502	3150	3266	3424	
3630	3736	3830	5806	6317	
6710	7052	8496	10428	10536	
	11065	11105	11343		

—Ի՛նչ կ'ընես
—Այո՛, Մարտիալ Պրազիլիա իմ
հասցէիս նամակ մը ուղղած էր, որ հոս
վերադարձուած էր իմ հրահանգիս հա-
մաձայն, և Պ. Լարաինուան զայն զբաւած
էր անոնց այս մասին ձեռք բան մը խօ-
սել համարձակելու, բայց ամենայն վա-
ղաբարտութեամբ պիտի ստիպեմ զին-
քը որ այդ բանը ձեր առջեւ խոստովա-
նի :

ԳՒՈՒՆ Ը.

ԼԱՐՏԻՆՈՒԱԻ ՆՈՐ ՏԱԳՆԱԹԸ

Տանիէլ հազիւ այս խօսքերը ա-
ւարտած էր. Պ. Լարաինուան բարկացած
իր կնիքը սեղանակէն ներս կը մանէր :
Տանիէլ ժպտուն դէմքով զայն զիմառ-
բեց անոր զիբղը նետուելու ձեռով :

—Ա՛հ հայրս, զձեռք զեա գրկած
չեմ եւ այս պատճառաւ իմ երջանկու-
թիւնս կատարեալ չէր տակաւին :

Եւ, հակառակ վաճառակա՞նին խու-
սափողական ջանքերուն, սրտի զեղումով
գրկեց զայն :

Թարգմ. Ե. ԹՈՐՈՍԵԱՆ
(Շարունակելի) (Վրոյր)